ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի մարտի 22-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար արտադրական հատուկ հագուստի (հանդերձանքի) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի մարտի 22-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2019 թվականի մարտի 22-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«Խնդրում ենք պարզաբանել՝ ինչու են բոլոր ապրանքատեսակները ներգրավված մեկ չափաբաժնի մեջ և սահմանվել մատակարարման շատ կարճ ժամկետ:»

Պարզաբանում

«Դատական դեպարտամենտի կարիքների համար արտադրական հատուկ հագուստի (հանդերձանքի) ձեռքբերման գնման ընթացակարգում գնման առարկան ներկայացված է մեկ չափաբաժնով, քանի որ հակառակ դեպքում կառաջանար համազգեստի միասնականության /գնման առարկայում ներառված ձևերի միևնույն կտորով, գունային գամմայով և համազգեստը կազմող առանձին բաղադրիչներից յուրաքանչյուրի մյուսների հետ փոխկապվածության/, ինչպես նաև համազգեստով միաժամանակյա ապահովման անհնարինություն: Մատակարարման ժամկետը սահմանվել է ելնելով գնման անհրաժեշտությունից՝ պահպանելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1)-ին մասի ը. ենթակետով սահմանված պայմանները:»

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: